Արձանագրություն N 3

<<ՔՆՔԾԻԳ-ՇՀԱՊՁԲ-16/7>> ծածկագրով շրջանակային համաձայնագրով իրականացվող ընթացակարգի գնահատողի հանձնաժողովի բացման նիստի շարունակություն

ք. Երևան 30 հունիսի 2016թ.
Ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Խոջայան /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Քեռյան /գնահատող Տ. Վասիլյան /գնահատող/,
Շ. Իսախանյան/բացող/
Գ. Խորենյան/բացող/,
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Կիրակոսյան

1. <<ՔՆՔԾԻԳ-ՇՀԱՊՁԲ-16/7>> ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների կողմից փաստաթղթերում առկա անհամապատասխանությունների շտկման մասին

(Ռ. Խոջայան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ <<ՔՆՔԾԻԳ-ՇՀԱՊՁԲ-16/7>> ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում <<Գրիգոր Այվազյան>> ԱՁ-ի և <<Կոմպաս>> ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում շտկվել են ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունը:

1.2 Գնահատող հանձնաժողովի գնահատող անդամների կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել է հետևյալ կերպ.

h/h	Մասնակիցների անվանումը	Հայտի գնահատականը
1	<<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ	Բավարար
2	<<Կոմպմարկետ>> ՍՊԸ	Բավարար
3	<<Էդվարդ Քոմփյութերս> ՍՊԸ	Անբավարար
4	<<Կոմպասս>> ՍՊԸ	Բավարար
5	<<Գրիգոր Այվազյան>> ԱՁ	Բավարար
6	<<ՍԵԳ>> ՍՊԸ	Բավարար
7	<<Էյչ Գրուպ>> ՍՊԸ	Բավարար
8	<<Միկրոկինգ>> ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. <<ՔՆՔԾԻԳ-ՇՀԱՊՁԲ-16/7>> ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցների մասին

(Ռ. Խոջայան)

2.1 Ելնելով ընթացակարգի գնահատման արդյունքներից՝ <<ՔՆՔԾԻԳ-ՇՀԱՊՁԲ-16/7>> ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող են ճանաչվում.

-1 չափաբաժնի մասով <<Կոմպասս>> ՍՊԸ-ն,
- 2, 5 չափաբաժինների մասով <<Էյչ Գրուպ>> ՍՊԸ-ն,
- 3 չափաբաժինների մասով <<Կոմպմարկետ>> ՍՊԸ-ն,
- 4-րդ չափաբաժնի մասով <<ՍԵԳ>> ՍՊԸ-ն

2.2 Գնման առարկաների նախահաշվային գները ներկայացված են Հավելված 1-ում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. ՀՀ ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին ծանուցելու մասին

(Ռ. Խոջայան)

3.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ տեղեր զբաղեցրած մասնակիցների <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն:

3.2 Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցներին՝ <<Կոմպասս>> ՍՊԸ-ին, <<Էյչ Գրուպ>> ՍՊԸ-ին, <<Կոմպմարկետ>> ՍՊԸ-ին և <<ՍԵԳ>> ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև իրենց կողմից առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

3.3 Հաշվի առնելով, որ 5-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը ներկայացրել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ /մասնակցի ներկայացրած գնային առաջարկը ցածր է գնման առարկայի նախահաշվային արժեքի 75 տոկոսից/, հանձնաժողովը որոշեց ծանուցել մասնակցին հրավերով սահմանված ժամկետում /երեք աշխատանքային օրվա ընթացքում/ լրացուցիչ հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ՝ համաձայն <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 168-Ն որոշման հաստատված կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի:

3.3 Հրավերով սահմանված ժամկետում 3.2 և 3.3 կետերում նշված փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը կմերժվի և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ կներկայացվի 2-րդ տեղ զբաղեցնող մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Ռ. Խոջայան)

4.1 Հաստատել հանձնաժողովի նիստերի անցկացման հետևյալ ժամանակացույցը.

- Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 08.07.2016թ., ժամը 11:40-ին, ՀՀ Քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ԾԻԳ>> պետական հիմնարկ, իրավաբանական և գնումների կազմակերպման բաժին, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ռ. Խոջայան

Անդամ՝ ---------- Ն. Քեռյան

---------- Տ. Վասիլյան

---------- Շ. Իսախանյան

---------- Գ. Խորենյան

---------- Ն. Կիրակոսյան

Քարտուղար

Հավելված 1

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Չափաբաժնի նախահաշվային գինը /հազ. Դրամ/
1	Անձնական համակարգիչներ	150 000
2	Լազերային տպիչներ	50 000
3	Համակարգչային մոնիթոր	41500
4	Անխափան սնուցման աղբյուրներ	20000
5	Սքաներներ՝ համակարգիչների համար	393 200